**Արձանագրություն N 4**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «06» մարտի 2017թ.

ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան** ՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Արթուր Թամրազյան**՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Էլլադա Արզաքանյան**՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄՀ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Կարեն Մելքոնյանը՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:*

**1.1 Տեղեկություններ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/08-04/17» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին**

Միաժամանակյա բանակցությունների հրավիրված մասնակցներից՝ «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ, «ԵՐԵՎԱՆ ՏԵԼԵԿՈՄ ՍՈԼՈՒՇՆՍ» ՓԲԸ, «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ, «ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ, «ՍԵԳ» ՍՊԸ, «ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԿՈՄՊԱՍՍ» ՍՊԸ ոչ մեկը ներկա չի գտնվել բանակցություններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Տեղեկություններ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 5-րդ, 9-րդ և 18-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին.**

2.1 Հաշվի առնելով, որ 5-րդ, 9-րդ և 18-րդ չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավիրված մասնակցիներից ոչ մեկը բանակցություններին ներկա չի գտնվել՝ հանձնաժողովը որոշեց՝

ա) հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 5-րդ, 9-րդ և 18-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

բ) հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 5-րդ, 9-րդ և 18-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.**

3.1. 1-ին, 7-րդ և 11-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ-ին.**

1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,

7-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՎԱՆԴԻUS» ՍՊԸ-ին:

11-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

3.2. **3-րդ, 4-րդ, 12-րդ, 13-րդ և 19-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:**

3-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,

4-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ին,

12-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՍԵԳ>> ՍՊԸ-ին,

13-րդ և 19-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՎԱՆԴԻUS» ՍՊԸ-ին,

3.3. **6-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԵՐԵՎԱՆ ՏԵԼԵԿՈՄ ՍՈԼՈՒՇՆՍ» ՓԲԸ-ին,**

6-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,

3.4. **8-րդ և 10-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԿՈՄՊԱՍՍ» ՍՊԸ -ին,**

8-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին,

10-րդ չափաբաժնի մասով առկա է ներկայացված գների հավասարություն:

3.5. **14-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՍԵԳ» ՍՊԸ-ին**

14-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

3.6. **15-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՎԱՆԴԻUS» ՍՊԸ -ին** , 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «ՍԵԳ» ՍՊԸ –ին:

3.7. **17-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՎԱՐՄԷՔՍ» ՍՊԸ-ին,**

17-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը:
Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017 թվականի մարտի 13-ը ներառյալ, ներկայացնել Կարգի նշված կետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ հրավիրել 2017 թվականի մարտի 15-ին, ժամը՝ 12:00-ին:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝

_____________ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝

_____________ Խորեն Պետրոսյան

_____________ Արթուր Թամրազյան

_____________ Էլլադա Արզաքանյան

Քարտուղար՝

_____________ Մարիամ Հայրապետյան

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04/17>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՈՐՈՇ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2017 թվականի մարտի 06-ի թիվ 4 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04/17

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

| Չափաբաժին | Գնման առարկայի համառոտ նկարագրություն | Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում | Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի /ընդգծել համապատասխան տողը/ | Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|
| 5 | Ցանցային բաժանարար /ավիչ 8 պորտ/ | «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ, «ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅԻԹԵՐՍ» ՍՊԸ, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ, «ԵՐԵՎԱՆ ՏԵԼԵԿՈՄ ՍՈԼՈՒՇՆՍ» ՓԲԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br><u>4-րդ կետի</u> | 5-րդ չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավիրված մասնակցիներից ոչ մեկը բանակցություններին ներկա չի գտնվել |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | Համակարգչի կոշտ սկավառակ | «ՎԱՆԴԻՍՏ» ՍՊԸ,<br>«ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ,<br>«ՍԵԳ» ՍՊԸ,<br>«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ<br>«ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ,<br>«ԿՈՄՊԱՍՍ» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | 9-րդ չափաբաժնի մասով առկա է ներկայացված նվազագույն գնային առաջարկների հավասարություն: Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավիրված մասնակցիներից ոչ մեկը բանակցություններին ներկա չի գտնվել |
| 18 | Սնուցման բլոկ | «ՎԱՆԴԻՍՏ» ՍՊԸ,<br>«ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ,<br>«ՍԵԳ» ՍՊԸ,<br>«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ,<br>«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ,<br>«ԵՐԵՎԱՆ ՏԵԼԵԿՈՄ ՍՈԼՈՒՇՆՍ» ՓԲԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | 18-րդ չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավիրված մասնակցիներից ոչ մեկը բանակցություններին ներկա չի գտնվել |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Մարիամ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**